

# ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X



Matenadaran  
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts  
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their  
gratitude to “JTI ARMENIA” CJSC  
for sponsoring the publication of this volume

**Մատենադարան**  
**Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և**  
**«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը**  
**երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին**  
**սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար**



MATENADARAN  
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

**BULLETIN OF MATENADARAN**  
**33**

Yerevan – 2022

МАТЕНАДАРАН  
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

**ВЕСТНИК МАТЕНАДАРАНА**  
**33**

Ереван – 2022

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ  
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԲԱՆԲԵՐ  
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

**33**

Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան  
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝ Վ. Տեր-Ղևոնդյան (գլխ. խմբագիր), Գ. Տեր-Վարդանյան, Գ. Մուրադյան (պատասխանատու քարտուղար), Կ. Մաթևոսյան, Վ. Թորոսյան, Թ. Վ. Լինտ, Ա. Մուլթաֆյան, Ա. Շահնազարյան, Գ. Գասպարյան, Օ. Վարդազարյան, Ա. Թամրազյան, Հ. Համբարձումյան:

«Բանբեր Մատենադարանի» 33, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ին-տ. երևան, 2022: 536 էջ (ներդիր 16 էջ):

Հ 33/խմբ. Վ. Տեր-Ղևոնդյան, 2022:

«Բանբեր Մատենադարանի» հանդեսի սույն համարում ընդգրկված են պատմությունը, բանասիրությունը, արվեստին և բնագիտությունը նվիրված հոդվածներ, երիտասարդական 7-րդ գիտաժողովի (2021 թ. նոյեմբերի 25-27) նյութեր, հրապարակումներ և մի հաղորդում:

**ԳՐԻԳՈՐ ԽԼԱԹԵՅՈՒ ԿԱՖԱՆԵՐԸ ՈՐՊԵՍ  
ԳԱՆՁԱՐԱՆԱՅԻՆ ԿԱՖԱՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՆՄՈՒՇՆԵՐ**

*Բանալի բառեր՝ Կաֆա, ժանր, գրիչ, հեղինակ, Գրիգոր Խլաթեցի, գանձ, Գանձարան, տաղ:*

**Կաֆան** հայ միջնադարյան գրականության յուրահատուկ բանաստեղծական տեսակ է, որը որպես ժանր ձևավորվել և զարգացել է Ժ-ԺԶ դարերում (առանձին դեպքերում ձգվելով մինչև ԺԷ-ԺԸ դդ.)<sup>1</sup>: Կաֆաներ գրել են Ֆրիկը, Խաչատուր Կեչառեցին, Գրիգոր Խլաթեցին, Գրիգորիս Աղթամարցին, Հովասափ Սեբաստացին, Զաքարիա Գնունեցին և ուրիշներ: Այս գրական տեսակն առաջին անգամ ներկայացրել է **Ղևոնդ Ալիշանը** իր «Սիսուան» հատորում<sup>2</sup>, ապա անդրադարձել են Հակովբոս Տաշյանը՝ իր «Ուսումնասիրությունք Ստոյն-Կալիսթենեայ վարուց Աղեքսանդրի» աշխատությանը<sup>3</sup>, Կարապետ Կոստանյանը, Արշակ Զոպանյանը, Գարեգին Հովսեփյանը, Մանուկ Աբեղյանը, Ասատուր Մնացականյանը և ուրիշներ: Կաֆաների աղբյուրագիտական-գրականագիտական ամփոփ քննությունը կատարել է **Հասմիկ Սիմոնյանը** և լույս ընծայել «Հայ միջնադարյան կաֆաներ (X-XVI դդ.)» ուսումնասիրությունը<sup>4</sup>:

«Կափայ» կամ «կաֆայ» անվանումը (ձեռագրերում հանդիպում է նաև «կաւայ») ձևով<sup>5</sup> առաջացել է արաբական *qāfiyya* բառից, որը նշանակում է ոտանավորի հանգ<sup>6</sup>:

\* Մերոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ovsannakhachatryan@mail.ru, հոդվածը ներկայացնելու օրը՝ փետրվարի 15, 2022, գրախոսելու օրը՝ ապրիլի 22, 2022:

1 Հաշվի առնելով Գանձարաններում գրված կաֆաների ժամանակային ընդգրկումը նույնպես:

2 **Ղ. Ալիշան**, *Սիսուան*, Վենետիկ, 1885, էջ 399:

3 **Յ. Տաշեան**, *Ուսումնասիրությունք Ստոյն-Կալիսթենեայ վարուց Աղեքսանդրի*, Վիեննա, 1892:

4 **Հ. Սիմոնյան**, *Հայ միջնադարյան կաֆաներ (X-XVI դդ.)*, Երևան, 1975:

5 ՄՄ ձեռ. 4200, 169ա՝ «Գանձս ասէ զկաւայս»:

6 **Ստ. Մալխասեանց**, *Հայերէն բացատրական բառարան*, հտ. 2, Երևան, 1944, էջ 417: Այս բառը «կափիա» ձևով գործածել է Գրիգոր Մագիստրոսը իր՝ ավանդաբար «Հազարատողեան առ Մանուչէ» կոչված, իսկ ձեռագրերում «Տաղասացութիւնք» վերնագրով պոեմի «Պատնատ ոտանատր բանիցս» խորագրով առաջաբանում՝ «...տաղասացութիւնք արաբացոցն սովորաբար վարժաբանութեամբ մրցեալք, միայաւղ աստեալ գծի, զոր դոմ **կափիա** անուանէք», **Գրիգոր Մագիստրոս**, *Թուղթք եւ չափաբերականք*, աշխ.՝ **Գ. Մուրադյանի**, Մատենագիրք հայոց, ԺԶ. հատոր, ԺԱ. դար, Երևան, 2012, էջ 140: Կաֆա անվան գործածության մասին

Հստ Հասմիկ Միմոնյանի՝ կաֆաներն ունեն հետևյալ թեմատիկ խմբավորումները՝ իմաստասիրական, նկարագրական, սուզի, կրոնական, սիրո, երգիծական, դրվատական-պարսավական և հիշատակարանատիպ<sup>7</sup>: Այս վերջին հիշատակարանատիպ տեսակները, ըստ նրա՝ «արժեքավոր տեղեկություններ են հայտնում կաֆաների հետ կապված ստեղծագործական աշխատանքների, իրենց (հեղինակների) անձի և հարակից այլ հարցերի մասին, այդ երգերին հաղորդելով պատմական որոշակի արժեք»<sup>8</sup>: Մեր կարծիքով հենց այս տեսակին են պատկանում **Գանձարան ժողովածուներում** տեղ գտած կաֆա վերտառությամբ չափածո ստեղծագործությունները, որոնք մեծ մասամբ բավական պարզ, հաճախ իրար կրկնող ոտանավորներ են: Ինչպես գիտենք, Գանձարանները հայ միջնադարյան գրականության մեջ իրենց ուրույն տեղն ունեցող ժողովածուներ են, որոնք ձևավորվել և զարգացել են Ժ-ԺԸ դարերում, հայտնի են նաև «Գանձգիրք», «Գանձտետր» անվանումներով, պարունակում են եկեղեցական տարեկան տոներին և առանձին սրբերին նվիրված հոգևոր բանաստեղծություններ, պահպանված են հարյուրավոր ձեռագիր ընդօրինակություններով, որոնց մեծ մասը պահվում է Մաշտոցյան Մատենադարանում<sup>9</sup>:

Գանձարան ժողովածուները բաժանվում են երեք հիմնական խմբերի կամ խմբագրությունների՝ **նախախլաթեցիական, խլաթեցիական և հետխլաթեցիական**<sup>10</sup>: Այս խմբագրությունների Գանձարաններն ունեն չափազանց տարբեր և բարդ կառուցվածք՝ իրար նման չեն նույնիսկ նույն խմբի կամ խմբագրության ձեռագրերը, օրինակ՝ հնագույն կամ նախախլաթեցիական խմբագրության Գանձարանները, ինչպես նշում է Ա. Քյոշկերյանը, ունեցել են գանձ-տաղ համակարգի ոչ միատեսակ դրսևորումներ՝ մի մասը բաղկացած է եղել միայն գանձերից, մյուսը՝ գանձերից և տաղային եզակի նմուշներից, երրորդը՝ միայն տաղերից և այլն<sup>11</sup>:

Ինչպես վերը նկատում ենք, Գանձարանների խմբագրությունների ան-

առավել մանրամասն տե՛ս Հ. Միմոնյան, «Կաֆայի ժանրը հայ միջնադարյան պոեզիայում», Հայ միջնադարյան գրականության ժանրեր, Երևան, 1984, էջ 355-357:

7 Հ. Միմոնյան, «Կաֆայի ժանրը հայ միջնադարյան պոեզիայում», Հայ միջնադարյան գրականության ժանրեր, էջ 378-380:

8 Նույն տեղում, էջ 380:


9 Ա. Քյոշկերյան, Գանձարանային մշակույթ, սկզբնաւորում են զարգացում (Ժ-ԺԳ դդ.), Երևան, 2008, էջ 5, 15:

10 Այս մասին տե՛ս՝ Սրբոց տոներին նվիրված գանձարանային կանոնները (խլաթեցիական և հետխլաթեցիական խմբագրության Գանձարաններում), աշխ.՝ Վ. Գ. Գևրգիսյանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2020, էջ 5-9:

11 Ա. Քյոշկերյան, Գանձարանային մշակույթ, էջ 42-45:

վանումները որոշված են ըստ **Գրիգոր Խլաթեցու**<sup>12</sup> խմբագրության, պատճառն այն է, որ Խլաթեցու խմբագրած Գանձարանը էապես տարբերվում է հնագույն խմբագրություններից. նա ոչ միայն ժողովածուն հարստացրել է իր հորինած նոր գանձերով, տաղերով, զանազան չափածո ստեղծագործություններով, այլև գրիչներին որոշակի ստեղծագործական ազատություն է տվել Գանձարան ընդօրինակելիս: Գրիչ-հեղինակները ազատորեն լրացումներ և փոփոխություններ են կատարել այս ժողովածուում՝ հաճախ այն ստեղծելով ոչ թե մեկ, այլ մի քանի գաղափար օրինակի ձեռագրերի նյութերով, հետևաբար Գանձարան ժողովածուները սկսել են համեմատաբար ավելի ազատ ոճով զարգանալ, ինչի արդյունքում էլ Խլաթեցիական և հետխլաթեցիական խմբագրության յուրաքանչյուր ձեռագիր մյուսից տարբերվում է ինչպես բովանդակությամբ, այնպես էլ կառուցվածքով:

Գանձարան ժողովածուի կանոնը հիմնականում ունի հետևյալ կառուցվածքը՝ **գանձ**<sup>13</sup>-**տաղ-փոխ** (կախված կանոնի կառուցվածքային և այլ առանձանհատկություններից՝ շղթայի մաս կարող են կազմել նաև **մեղեդին** ու **հորդորակը**)<sup>14</sup>. այստեղ գլխավոր միավորը գանձն է, որի անունով էլ ժողովածուն կոչվում է Գանձարան<sup>15</sup>: Այս շղթայի գլխավոր տարրին, այսինքն՝ գանձին են նվիրված Խլաթեցիական և հետխլաթեցիական խմբագրության Գանձարաններում եղած կաֆա կոչվող բանաստեղծությունները, որոնք սովորաբար գրված են լինում գանձից առաջ, օրինակ՝ ՄՄ 6851 ձեռագրի «Սրբոյն Վահանայ Գողթնեցւոյն»



նկ. 1. ՄՄ 6851, 84բ

խորագրով գանձին նվիրված կաֆան (տե՛ս նկ. 1.): Երբեմն հանդիպում են նաև գանձից հետո գրված կաֆաների նմուշներ, ինչպես օրինակ՝ ՄՄ 6851 ձեռագրի «Գանձ Երեւման սուրբ խաչին ի Մաթէոսէ» խորագրով

<sup>12</sup> **Գրիգոր Մերենց Խլաթեցի** (1349-1425 թթ.) ծնվել է Բզնունյաց գավառի Խլաթ քաղաքում, հոր անունով ստացել է Մերենց (որդի Մերի), իսկ հայրենի քաղաքի անունով Խլաթեցի մականունները: Խլաթեցին եղել է վարդապետ-մանկավարժ, ինչպես նաև ընդօրինակել, խմբագրել, ծաղկել, նորոգել, սրբագրել է տարբեր ժանրերի բազմաթիվ ձեռագրեր: Խլաթեցու կյանքի և մատենագրական ժառանգության մասին առավել մանրամասն տե՛ս **Ա. Մաթևոսյան, Ա. Մառաբյան, Գրիգոր Մերենց Խլաթեցի**, Երևան, 2000, էջ 25-120:


<sup>13</sup> Հնագույն կամ նախախլաթեցիական ընդօրինակություններում **գանձերը** կոչվել են **քառոցներ**, տե՛ս **ՄՄ ձեռ. 2061**, 2ա, 6բ, 13ա և այլուր:

<sup>14</sup> Սրբոց տոներին նվիրված գանձարանային կանոնները, աչխ.՝ **Վ. Գ. Դերեկյանի**, էջ 18-22:


<sup>15</sup> **Ա. Քեօշկերեան, Գանձարանային մշակույթ**, էջ 26-28:



գանձից հետո և «Տաղ բագ-  
մախորհուրդ ի Սըրկայ» խո-  
րագրով տաղից առաջ գրված  
կաֆան (տե՛ս նկ. 2): Հետխ-  
լաթեցիական խմբագրության  
Գանձարաններում կաֆանե-  
րը հաճախ գրված են լինում  
գանձին կից՝ լուսանցնե-  
րում, օրինակ՝ ՄՄ 7509 ձե-  
ռագրում «Գանձ մարտիրոսաց» խորագրով գանձին նվիրված կաֆան՝ ստորին  
լուսանցում (տե՛ս նկ. 3):



Նկ. 2. ՄՄ 6851, 213ա



Նկ. 3. ՄՄ 7509, 255ա

Այսպիսով, առանձնացնելով և ուսումնասիրելով Գանձարան ժողովածու-  
ների մեծ մասը՝ պարզեցինք, որ գանձարանային կաֆաների հնագույն նմուշ-  
ները պահպանված են ՄՄ 4011 Գանձարանում (ԺՆ. դար), որը Խլաթեցու  
ինքնագիրը չէ, բայց օրինակված է 1399-1400 թթ. նրա գրած մի Գանձա-  
րանից<sup>16</sup>, որտեղ կաֆաներից մեկում հեղինակը հիշատակել է գանձի գրության  
1399 թվականը.

...Ի վեշտասան յոբելենի  
Եւ չորրորդ երկտասանի (1399)  
Բանըս գրրեցաւ այս գովելի,  
Գանձս Յակոբայ՝ ւ Յոհանիսի<sup>17</sup>:

<sup>16</sup> Ա. Մաքևոսյան, Ս. Մառաբյան, Գրիգոր Մերենց Խլաթեցի, էջ 47:  
<sup>17</sup> ՄՄ 4011, 358բ:

Որևէ կասկած չինել չի կարող, որ Գրիգոր Խլաթեցու գանձերից առաջ գրված կաֆաների հեղինակը հենց ինքն է, քանի որ Գրիգոր անունը ոչ միայն բնագրում է հիշատակվում, այլև կազմվում է տողերի սկզբնատառերով (այդ շրջանում ընդունված բանաստեղծական ոճ էր ծայրակապերով գրելը՝ հոգվում էր հիմնականում հեղինակի անունը), օրինակ՝ «Գոչումն ըղձական, գովասանական...» սկզբնատողով գանձից առաջ գրված կաֆան՝ «Գրիգորա ե» ծայրակապով:

**Առաջիկայ գանձս ասէ գկաֆ[այ]ս գայս**

**Փանձ եմ ախորժ եւ պատուական,**

**Բամեալ բանիւ անսխալական,**

**Ի Գրիգորէ մըտառական**

**Քըրեալ, գոր կա յԱւետարանն,**

**Որ զինչ ասէ վասն Յարութեան,**

**Բոտեալ սիրոյն իւր կատարման,**

**Աղազարուն յայն գերեզման**

**Եկեալ տըւաւ զկենդանութեանն<sup>18</sup>:**

Հաշվի առնելով, որ Գանձարաններում եղած կաֆաների հնագույն նմուշները Գրիգոր Ծերենց Խլաթեցու գրչին են պատկանում, կարող ենք համարել, որ նա է գանձերին նվիրված կաֆաներ գրելու ավանդույթի հիմնադիրը: Այս ավանդույթը հետագայում շարունակում են այլ հեղինակներ՝ **Առաքել Բաղիշեցին, Սիմեոն գանձասացը, Կարապետ Բաղիշեցին և ուրիշներ:**

Այս ստեղծագործությունների՝ կաֆա լինելու ժանրային բնորոշման վերաբերյալ գիտնականները տարբեր կարծիքներ ունեն. **Փ. Հովսեփյանը** Գանձարանների խմբագրությունների մասին գրելիս Խլաթեցու շափածո այս ստեղծագործություններն անվանում է կաֆաներ՝ «...գանձերի (եւ հոգևոր երգերի) ժողովածուների երկու իրարից տարբեր խմբագրություններ յայտնի են մեզ, մէկը հին եւ աւելի արժէքաւոր, հազուագիւտ, միւսը Գրիգոր Խլաթեցու ձեռքով հաւաքած եւ **կաֆաներով** եւս ճոխացրած, յետագայում յաւելումներով ուրիշների կողմից»<sup>19</sup>: Ըստ Հասմիկ Սիմոնյանի՝ «ժամանակին որոշ դեպքերում տեղի է ունեցել իմաստի ընդլայնում՝ «կաֆան» ընկալվել է իբրև առհասարակ գողտրիկ, հաճախ հայրենատիպ «երգ», «բանաստեղծություն»: Կաֆա են անվանվել Գրիգոր Ծերենցի և այլոց՝ գանձերին նախորդող **շափածո կտորները**»<sup>20</sup>: Արտաշես Մաթևոսյանը և Սեդա Մարաբջյանը նշում են՝ «Խլաթեցին գանձարանային

<sup>18</sup> ՄՄ 4011, 127ա:

<sup>19</sup> **Փ. արհեստ. Հովսեփեանց, Մխիթար Այրիվանեցի, նորագիւտ արձանագրութիւն եւ երկեր**, Երուսաղէմ, 1931, էջ 5:

<sup>20</sup> **Հ. Սիմոնյան, Հայ միջնադարյան կաֆաներ (X-XVI դդ.)**, էջ 38:

յուրաքանչյուր միավոր սկսում էր կաֆայով, ապա անցնում բուն գանձին, տաղին, մեղեդուն և հորդորակին»<sup>21</sup>: Ա. Քյոշկերյանը գրում է, որ Գանձարաններում «երբեմն, որոշ հեղինակների, առաելաբար, Գրիգոր Խլաթեցու գանձերին նախորդում են յանգաւոր կարճ ոտանաւորներ՝ չորս, վեց, կամ ութ տողերից բաղկացած, որոնք կոչւում են կաֆա: Սրանք միջնադարեան կաֆաների նմանողութեամբ յօրինուած բանաստեղծութիւններ են, որոնք յաճախ յօդում են հեղինակի անունը»<sup>22</sup>: Վ. Գերիկյանն ավելացնում է հետևյալը՝ «Գրիգոր Խլաթեցուց սկսած՝ գանձերի սկզբում հաճախ դրվում են չափածո փոքր ստեղծագործություններ, որոնք անվանվում են կաֆաներ: Վերջիններս, ըստ էության հիշեցնում են ձեռագրերում Աստվածաշնչի տարբեր գրքերի և միջնադարյան մեկնաբանական գրականության մի շարք ստեղծագործությունների սկզբում դրվող և «Նախագրութիւն» կամ «Գրառաջք» անվանվող, դարձյալ փոքրածավալ, արձակ կամ չափածո ստեղծագործությունները: Տրված անվանումները հուշում են, որ դրանք դրվելով բուն երկից առաջ, բացատրում և բնորոշում են այն»<sup>23</sup>:

Ինչպես նկատում ենք, որոշ գիտնականներ այս ստեղծագործությունները հստակ անվանել են կաֆաներ, մյուսները՝ կաֆայանման չափածո կտորներ, իսկ Վ. Գերիկյանը դրանք նմանեցրել է գրառաջք-նախագրություններին: Հաշվի առնելով այս կարծիքները, մենք փորձեցինք վերհանել Գանձարանային կաֆաների ժանրային առանձնահատկությունները, հասկանալու համար՝ դրանք կաֆաներ են, թե՞ կաֆայանման բանաստեղծություններ:

Այսպիսով, արձակ երկերում տեղ գտած կաֆաները (կարելի է անվանել դասական կաֆաներ) ունեն իրենց ժանրային որոշակիորեն կայուն հատկանիշները, որոնց խստորեն հետևել են կաֆայագիր հեղինակները՝ անկախ իրենց անհատականութունից, ինչը հատուկ է եղել ընդհանրապես միջնադարյան գրականությանը՝ հայ, ռուս<sup>24</sup> և այլն: Գասական կաֆայի գլխավոր ժանրային հատկանիշը, ըստ Հ. Սիմոնյանի, կիրառության ոլորտի առանձնահատկութունն է. այս ստեղծագործությունները հիմնականում հանդես գալով արձակ բնագրերում՝ լինելով նրանց գոյության արդյունքը, ոչ միայն հարստացնում, այլև վերապատմում են տվյալ արձակ երկի նախընթաց հատվածի բովանդակությունը՝ արտահայտելով որևէ խոհ, վերաբերմունք և այլն, ինչպես օրինակ՝ Ալեքսանդր Մակեդոնացու պատմության, Պղնձե քաղաքի պատմության և այլ երկերում տեղ

<sup>21</sup> Ա. Մաթևոսյան, Ս. Մարաբյան, Գրիգոր Ծերենց Խլաթեցի, էջ 72:

<sup>22</sup> Ա. Քոշկերյան, Գանձարանային մշակույթ, էջ 19:

<sup>23</sup> Սրբոց տոներին նվիրված գանձարանային կանոնները, աշխ.՝ Վ. Գ. Գերիկյանի, էջ 25:

<sup>24</sup> Ինչպես գրում է Գ. Լիխաչևը՝ «ի տարբերություն նոր ժամանակների գրականության, Հին Ռուսիայում (միջնադարում) ժամուկ էր որոշվում հեղինակի կերպարը», տե՛ս Դ. Ս. Լիխաչև, *Поэтика древнерусской литературы*, Ленинград, 1967, с. 56:

գտած կաֆաները<sup>25</sup>: Կաֆաների ժանրային մյուս հատկանիշներն են՝ *ա. կառուցվածքային առանձնահատկությունը՝ հայրենիների նման*<sup>26</sup> ամփոփ միտք արտահատող *ութնյակներ են՝ փոքրաթիվ շեղումներով, բ. տաղաչափությունը՝ կրկին հայրենիների չափով են՝ 7-8 վանկանի, առանձին դեպքերում հորինվել են նաև 9, 10, 11, 12 վանկանի կաֆաներ, գ. հանգավորումը՝ հիմնականում նույնահանգ են*<sup>27</sup>:

Այժմ փորձենք վերոնշյալ հատկանիշները համադրել գանձարանային կաֆաների հատկանիշների հետ, օրինակ բերելով ՄՄ 6851 ձեռագրի (Խլաթեցու ինքնագիրն է և գրվել է ժե. դարում՝ 1408 թվականից առաջ)<sup>28</sup> «Փանձ ծնընդեան սուրբ Աստուածածնին եւ յիշատակի ծնողաց նորին» խորագրով գանձից առաջ գրված կաֆան.

*Առաջիկայ գանձս ասէ զկաֆայս*

*Փանձ եմ չափով եւ գովելի,*

*Բոտեալ ձայնիւ ախորժելի,*

*Ի Գրիգորէ յառաջ եկի՝*

*Քրծեալ մատամբ ի քարտիսի,*

*Որ վերժանիմ յեկեղեցի,*

*Բամից դասուց պաշտօնէի,*

*Ի տաւնըս սուրբ յիշատակի*

*էին ծնաւղի մաւրն Աննայի*<sup>29</sup>:

Խլաթեցու այս և բազմաթիվ այլ կաֆաներում օգտագործված է դիմառնությունը<sup>30</sup> որպես պատկերավորման միջոց (երբ իրերը, երևույթներն օժտվում էին գործելու, խոսելու և շնչավոր էակին բնորոշ այլ հատկանիշներով, այսինքն՝ անձնավորվում էին)<sup>31</sup>. ինչպես տեսնում ենք, կաֆայում գանձն անձնավորված իր գովքն է ասում, պատմում իր իսկ ստեղծման մասին: «Գրիգորի է» ծայրա-

<sup>25</sup> Այս հատկանիշի մասին մանրամասն տե՛ս Հ. Սիմոնյան, «Կաֆայի ժանրը հայ միջնադարյան պոեզիայում», *Հայ միջնադարյան գրականության ժանրեր*, էջ 364-367:

<sup>26</sup> Այնքան մեծ է այս ժանրերի նմանությունը, որ երբեմն հայրենիներն իբրև կաֆաներ մտա՛վ են գործել արձակի մեջ, և ընդհակառակը, որոշ կաֆաներ ընկալվել են որպես հայրենի և երգվել ինքնուրույն. այս մասին տե՛ս նույն տեղում, էջ 373-375:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 367-370:

<sup>28</sup> Ա. Մաքևոսյան, Ս. Մարաբյան, *Գրիգոր Մերենց Խլաթեցի*, էջ 50:

<sup>29</sup> ՄՄ 6851, 18բ:

<sup>30</sup> «Պիտոյից գրժում» ճարտասանական բարանություն վարժուպյան տարատեսակ է. տե՛ս Գիրք պիտոյից, աշխ. Գ. Մուրադյան, Երևան, 1993, էջ 184, 256, 304:

<sup>31</sup> Ֆ. Հ. Խլաթյան, *Ոճաբանական տերմինների բառարան տեղեկատու*, Երևան, 1976, էջ 9: Ստ. Մալխասեանց, *Հայերեն բացատրական բառարան*, հ. 1, Երևան, 1944, էջ 520: Կամ՝ *Литературный словарь*, էջ. կայք՝

<http://niv.ru/doc/dictionary/literary-dictionary/fc/slovar-206.htm#zag-548>:

կապով այս կաֆան ութնյակ է, ունի 8, 8, 9, 8, 8, 9, 8, 10 վանկանի տողեր, նույնահանգ է:

Այսպիսով պարզ է դառնում, որ վերոհիշյալ կաֆան իր հիմնական ժանրային հատկանիշներով համապատասխանում է արձակ երկերում տեղ գտած դասական կաֆաներին՝ միայն այն տարբերությունը, որ չափածո երկից առաջ է գրված և ունի ծայրակապ<sup>32</sup>: Վերջիններս, սակայն, ոչ թե հակասում, այլ լրացնում են կաֆա կոչվող բանաստեղծության ժանրային հատկանիշների շարքը, ուստի կարող ենք եզրահանգել, որ Գանձարաններում Խլաթեցու գանձերին կից չափածո ստեղծագործությունները, որոնք ինքն անվանել է կաֆաներ («Կաֆայ գանձիս ի գծողէս»<sup>33</sup>), իսկապես պատկանում են կաֆայի ժանրին<sup>34</sup>:

Դասական կաֆային համապատասխանող մեկ այլ օրինակ է ՄՄ 3870 ձեռագրի «Զարավարացն Թէոդոսի եւ Մերկեռիոսի» խորագրով գանձից առաջ գրված, «Գրիգորի է» ծայրակապով կաֆան, որը գեղարվեստական գեղեցիկ համեմատություններով նույնահանգ (բոլոր տողերը ավարտվում են «-իկ»-ով, որը մեծ մասամբ փաղաքշական վերջածանց է) ութնյակ է:

*Առաջիկա գանձս ասէ զկաֆայս  
Գանձ չափաւոր իմ սակաւիկ,  
Բոտ հանճարով բանս գեղեցիկ,  
Ի Գրիգորէ ոգոյ նըւաստիկ,  
Գըրեալ եղէ բանս աղքատիկ,  
Որ ժողովեաց զբանս իմ զըտիկ,  
Բաբունաբար՝ որպէս ծաղիկ,  
Ի չրաբունեաց բանից սըրպիկ,  
էլից զփափագ մըտաց քաղցրիկ<sup>35</sup>:*

<sup>32</sup> Խլաթեցու կաֆաները հիմնականում ծայրակապով են գրված, մինչդեռ հետխլաթեցիական շրջանում կարելի է գտնել ծայրակապով կաֆաների հատուկեմս նմուշներ:

<sup>33</sup> ՄՄ 6851, 84բ:

<sup>34</sup> Տե՛ս նաև ՄՄ 8188 ձեռագրի 75բ էջում՝ «Մընդեան սուրբ Կարապետին» խորագրով գանձից առաջ գրված կաֆան՝ «Գրիգորի է» ծայրակապով:

Գանձս գրեցայ ես պիտանի,  
Բամեալ բանիս յոյժ ըղձալի,  
Ի տաւնըս սուրբ յիշատակի,  
Գըծեալ ի փառս Կարապետի,  
Որ վերձանի մի յատենի,  
Բամեալ մանկանց նոր Սիոնի,  
Ի տաւնըս սուրբ Կարապետի  
էրանելոյն Յովանիսի:

<sup>35</sup> ՄՄ 3870, 73ա:

Կան փոքրաթիվ շեղումներ, երբ կաֆաներն ունեն ոչ թե ութ, այլ վեց տող<sup>36</sup>, օրինակ՝ ՄՄ 8188 ձեռագրի «Իգնատիոսի հայրապետի» խորագրով գանձից առաջ գրված կաֆան՝ «Գրիգոր» ծայրակապով.

**Առաջիկայ գանձս ասէ զկաֆայս**

Գանձ պիտանի եմ՝ ւ ախորժակ,

Րոտեալ ի ձայն բանիւ յըստակ,

Ի Գրիգորէ առն իմաստակ

Գըրեալ ի քարտիս շարունակ,

Ով որ ունի ձայն անուշակ,

Րախճանապէս ասէ համակ<sup>37</sup>:

Վեցնյակ է նաև Վենետիկի Հ<sup>մր</sup> 607 ձեռագրի (1425 թ.) «Ամենայն կիրակ(ա)մտի ասայ՝ զգանձս» խորագրով, «Գերամբարձ Աստուած գովեալդ ի զաւրաց զընդից հրեշտակաց» սկզբանտողով գանձից առաջ գրված կաֆան.

**Գանձս ասէ.**

Գանձըս գրեցայ կիրակմտի,

Րամ աւետեաց սուրբ գիշերի,

Ի Գրիգորէ մեղապարտի

Գրեալ եղէ բանս ի կարգի,

Որ միտս ունի նաչ հաւանի,

Րամեալ սիրով ասէ զբարի<sup>38</sup>:

Կաֆան ժանրային առնչություններ ունի ոչ միայն հայրենների, անտունիների և ժողովրդական երգերի<sup>39</sup>, այլև հիշատակարանների հետ, հատկապես՝ շափածո: Հիշատակարանում ձեռագրի, իսկ կաֆայում գանձի ստեղծման և այլ հանգամանքների մասին պատմությունն է, որտեղ հեղինակը՝ այս դեպքում Գրիգոր Խլաթեցին, հիշատակարանագիր գրիչների նման իրեն բնութագրում է «մտամոլար եւ անիմայ», «գարշ», «աղտեղի» և այլ նվաստացուցիչ խոսքերով, ծայրակապով կազմում է իր անունը և վերջում օրհնում գանձը երգողներին, օրինակ.

**Գանձս ասէ զկաֆայս զայս**

Գանձըս գրեցայ Կիրակոսի եւ Յուզիտայ,

<sup>36</sup> Երբեմն հանդիպում են նաև տասը, տասնմեկ տող ունեցող կաֆաներ, օրինակ՝ ՄՄ 4011, 358բ, ՄՄ 3870, 149ա էջերի կաֆաները՝ տե՛ս սույն հոդված, էջ 99-100:

<sup>37</sup> ՄՄ 8188, 21բ:

<sup>38</sup> Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեան ի Վենետիկ, հ. Ե., յօրինեց՝ Հ. Սահակ վրդ. Ճեմճեմեան, Վենետիկ-Ս. Ղազար, 1995, էջ 320:

<sup>39</sup> Այս մասին տե՛ս Հ. Սիմոնյան, «Կաֆայի ժանրը հայ միջնադարյան պոեզիայում», Հայ միջնադարյան գրականության ժանրեր, էջ 373-378:

Բամեալ բանիւ խորհրդաւոր յաւրինեցայ,  
 Ի Գրիգորէ մըտամոլար եւ անիմայ  
 Գըծեալ քարտ ըսպիտ[ակ]ափայլ գրոշմեցայ,  
 Ով զիս ասէ, բոլոր սրտիւ ուրախանայ,  
 Բոտեալ հոգով ի տաւնս ցընծայ Կիրակոսի եւ Յուդիտայ<sup>40</sup>:

Հիշատակարանի գրիչը օրհնում է ձեռագիրը խնամքով պահպանողին, իսկ կաֆայի հեղինակը՝ գանձը երգողին, օրինակ՝ ՄՄ 6851 ձեռագրի «Ի գըծողէս վասն ոգողին» վերնագրով կաֆայի վերջում կա օրհնություն կամ մաղթանք, թե ով գանձը ամբողջ սրտով երգի, մեղքերից կազատվի.

Գանձըս խաչի, որ գըրեցաւ,  
 Բամեալ բանիւ գումարեցաւ,  
 Ի Մաթոսէ ստորոգեցաւ,  
 Գըրիգորէ սրբագրեցաւ:  
 Ով որ ասէ բոլոր սրտաւ,  
 Բամեալ սպառի մեղքն իւր կամաւ<sup>41</sup>:

Մաղթանք ունեցող մեկ այլ կաֆա էլ կա Երուսաղեմի Հ<sup>մ</sup>ր 2149 ձեռագրի 26-րդ էջում.

Առաջիկայ գանձըս Նիկողայոսի ասէ զկաֆայս  
 Գանձըս գրեցայ ես ի կարգի,  
 Բամից հաւր Նիկողայոսի,  
 Ի Գրիգորէ մըտաց յոռի,  
 Գըրեալ եղէ ըստ պատշաճի,  
 Ով որ ասէ զիս յատենի,  
 Բոտեալ սիրով մեղքն իւր քաւի, ամէն<sup>42</sup>:

Խլաթեցու գանձարանային կաֆաների հիշատակարանատիպ տեսակի մասին է վկայում նաև այն փաստը, որ կաֆաներում նա հիշատակել է ոչ միայն իր անունը, այլև այդ գանձի ստեղծման թվականը: Այսօրինակ կաֆա, ինչպես վերը նշեցինք, հանդիպում ենք ՄՄ 4011 ձեռագրում՝ «Գանձ որդոցն Որոտման Յակոբայ եւ Յոհանիսի» խորագրով գանձից առաջ.

Գանձս ասէ զկաֆայս զայս  
 Գանձըս գրեցի ես պիտանի,

<sup>40</sup> ՄՄ 3870, 30բ:

<sup>41</sup> ՄՄ 6851, 213ա:

<sup>42</sup> Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. 7, կազմեց՝ Ն. արքեպ. Պողարեան, Երուսաղեմ, 1974, էջ 202:

Բամեալ բանիւ ախորժելի,  
 Ի Գրիգորէ գարշ 'ւ աղտեղի  
 Գրեալ որդոցըն Զեբեթի,  
 Որդոց քրւերըն Քրիստոսի,  
 Բամից փըրկչին Տեառն Յիսուսի,  
 Ի վեշտասան յոբելենի  
 եւ շորրորդ երկտասանի (1399)  
 Բանըս գըրեցաւ այս գովելի,  
 Գանձս Յակոբայ 'ւ Յոհանիսի<sup>43</sup>:

Այս կաֆայում Գրիգոր Խլաթեցին նշել է գանձի գրության թվականը տոմարաթիվ ծածկագրով<sup>44</sup>, որը վերծանելով ստացվում է 1399 թ.՝ հավանաբար այն ձեռագրի գրչության թվականը, որից ընդօրինակվել է ՄՄ 4011 ձեռագիրը:

Նմանատիպ կաֆա կա նաև ՄՄ 3870 ձեռագրում «Գանձս Յովհաննու ծընըն[դ]եանն» խորագրով գանձից առաջ, երբ հեղինակը կրկին տոմարաթիվ ծածկագրով գրել է գանձի ստեղծման ժամանակը՝ 1418 թ.

Գանձս ասէ զկաֆայս  
 Գանձըս գրեցայ ես պիտանի,  
 Բամեալ բանիւ ախորժելի,  
 Ի Գրիգորէ գարշ 'ւ աղտեղի  
 Գրեալ սրբոյն Կարապետի՝  
 Որդոյն [սուրբ Զ]աքարիայի,  
 Բամից Փըրկչին մկրտողի,  
 Ի տասն եւ եաւթն յոբելենի,  
 Է եւ տասին թիւ աւելի (1418)  
 Բանս գրեցաւ այս գովելի,  
 Գանձս Յովհաննու Կարապետի՝  
 Նախամեծար սրբոց դասի<sup>45</sup>:

Վերոնշյալ կաֆան ընդօրինակված է նաև ՄՄ 4200 (ԺԶ. դ.)<sup>46</sup>, 7509

<sup>43</sup> ՄՄ 4011, 358բ:

<sup>44</sup> Տոմարաթիվ են կոչվում այն ծածկագրերը, որոնցում գաղտնագրության նպատակով օգտագործված են տոմարական գիտության մեջ ընդունված պարբերաշրջանները (տվյալ դեպքում «յոբելեան») հոբելյան, որը հիսուն տարիների պարբերաշրջանն է) և որոնք գործածվում են հիմնականում տոմարական բնագրերում: Այս մասին առավել մանրամասն տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, Հայկական ծածկագրութուն, Երևան, 1978, էջ 190-245:

<sup>45</sup> ՄՄ 3870, 149ա:

<sup>46</sup> Ա. Մաքևոսյան, Ս. Մարաբյան, Գրիգոր Ծերենց Խլաթեցի, էջ 54-55, նաև՝ ՄՄ 4200, 252ա:



(ժէ. դ.)<sup>47</sup>, եղմ. 135 (1575 թ.)<sup>48</sup> և այլ ձեռագրերում: Եթե այս կաֆան նշված ձեռագրերի համար նախագաղափար օրինակի հիշատակարանի (քանի որ դրանք ավելի ուշ շրջանի ընդօրինակություններ են), ապա ՄՄ 3870 ձեռագրի համար գրչութիան ժամանակի հիշատակարանի արժեք ունի. այն գրչութիան թվականը ցույց տվող տվյալ է, այսինքն՝ ձեռագիրը գրված է 1418 թվականին կամ դրանից հետո:

Այսպիսով, ինչպես նկատեցինք, նմանատիպ կաֆաներն ունեն հիշատակարանի արժեք և կարևոր ձեռագրագիտական նշանակություն, քանի որ գրչութիան ժամանակի հիշատակարանի բացակայության դեպքում վերջիններիս միջոցով հնարավոր է պարզել ինչպես ձեռագրի գրչութիան որոշակի, այնպես էլ մոտավոր ժամանակը:

Վերջում հարկ ենք համարում նշել գանձարանային կաֆաների մեկ ոչ պակաս կարևոր հատկանիշ, որը վկայում է այս կաֆաների որոշակի ժանրային ինքնուրույնության և անկախություն մասին. տարբեր ձեռագրերում՝ նույն կաֆան կարող է նվիրված լինել տարբեր գանձերի, և ընդհակառակը, միևնույն գանձին կարող են նվիրված լինել տարբեր կաֆաներ: Օրինակ, վերոհիշյալ «Գանձս ասէ զկաֆայս («Գրիգորի է բան»)» խորագրով և «Գանձըս գրեցայ ես պիտանի, / Բամեալ բանիւ ախորժելի...» սկզբնատողերով հիշատակարանատիպ կաֆան ՄՄ 3870 ձեռագրում հանդիպում է «Գանձ Յովհաննու ծընըն[դ]եանն» խորագրով, «Գերագոյն բարի, Փըրկիշ աշխարհի, Քրիստոս...» սկզբնատողով գանձից առաջ<sup>49</sup>, իսկ ՄՄ 7509 ձեռագրում՝ «Գանձ գլխատմանն Յով[հ]աննու Կարապետին» խորագրով, «Գոյակն էական, Հաւր սահման եւ բան...» սկզբնատողով գանձին կից<sup>50</sup>, և համապատասխանաբար, նվիրված է այդ գանձերին: Եվ հակառակ երևույթը՝ ՄՄ 3870 ձեռագրում «Գանձ Յովհաննու ծընըն[դ]եանն» խորագրով, «Գերագոյն բարի, Փըրկիշ աշխարհի, Քրիստոս...» սկզբնատողով գանձին նվիրված է վերոնշյալ կաֆան («Գանձըս գրեցայ ես պիտանի, / Բամեալ բանիւ ախորժելի...» սկզբնատողերով կաֆան)<sup>51</sup>, ՄՄ 6851 ձե-

<sup>47</sup> ՄՄ 7509, 139բ՝ «...ի ժե. յոբէլինի

Եւ տասնեփն թիւ աւելի (1320)

Բանըս գրեցաւ այս գովելի,

Այն Յովհաննու գլխատմանի,

Նախամեծար սրբոց դասի»։ կաֆայի վերջում ծածկագրված թվականը անհավանական է, քանի որ այն պատկանում է Գրիգոր Խլաթեցու գրչին, ուստի մնում է ենթադրել, որ գրիչը վրիպել է ժէ.-ի փոխարեն գրել է ժե., իսկ տասն եւ եաւթն-ի փոխարեն՝ տասնեփն:

<sup>48</sup> Եղմ. 135, 294բ, տե՛ս Մայր ցուցակ ձեռագրաց Արբոց Յակոբեանց, հ. 1, կազմեց՝ Ն. Եպս. Պողարեան, Երուսաղեմ, 1966, էջ 391:

<sup>49</sup> ՄՄ 3870, 149ա:

<sup>50</sup> ՄՄ 7509, 139բ:

<sup>51</sup> ՄՄ 3870, 149ա:

ուագրում նույն գանձին նվիրված է այլ կաֆա<sup>52</sup>, ՄՄ 7509 ձեռագրում՝ այլ<sup>53</sup>:

Այսպիսով, ԺԳ. դարավերջից սկսած Գանաձարան կոչվող ժողովածուներում Գրիգոր Խլաթեցու հեղինակությունը հայտնվեցին կաֆա կոչվող բանաստեղծություններ (առաջին նմուշները գտնում ենք ՄՄ 4011 ձեռագրում), որոնք մենք անվանեցինք գանձարանային կաֆաներ: Այս կաֆաները իրենց ընդհանուր հատկանիշերով կիրառության ոլորտի առանձնահատկությամբ, կառուցվածքով, տաղաչափությամբ, հանգավորմամբ համապատասխանելով արձակ երկերում տեղ գտած կամ դասական կաֆաներին, ունեն նաև միայն իրենց հատուկ հատկանիշերը՝ ծայրակապի առկայությունը, հիշատակարանային բնույթը և այլն<sup>54</sup>: Գանաձարանային կաֆաներ գրելու Խլաթեցու այս ավանդույթը շարունակվում է նաև հետագայում՝ ձգվելով մինչև ժԸ. դարը. Գանաձարան ժողովածուներում իրենց գանձերին նվիրված կաֆաներ են գրում Առաքել Բաղիշեցին, որը Գրիգոր Ծերենց Խլաթեցու աշակերտն էր, Սիմեոն գանձասացը, Կարապետ Բաղիշեցին և այլ տաղասաց, գանձասաց գրիչներ ու հեղինակներ:

<sup>52</sup> ՄՄ 6851, 58ա.

**Առաջիկայ գանձս ասէ զկաֆայս**  
**Գանձըս գրեցայ ես պիտանի,**  
**Բամեայ բանի յոյժ ըղձալի,**  
**Ի տանըս սուրբ յիշատակի,**  
**Գրծեայ ի փառս Կարապետի,**  
**Որ վերձանիմ ի յատենի,**  
**Բամեայ մանկանց նոր Սիոնի,**  
**Ի տանըս սուրբ Կարապետի**  
**էրանելոյն Յովհաննիսի:**

<sup>53</sup> ՄՄ 7509, 26ա.

**Գանձ գեղեցիկ ես պիտանի,**  
**Բոտ պատմութեամբ ի շար տողի,**  
**Ի Գրիգորէ անպիտանի,**  
**Գրեայ սրբոյն Կարապետի,**  
**Որ ի Տարանըն նահանջի,**  
**Բամից սրբոց բազմատենի,**  
**Ի Գրիգորէ Լուսատուչի,**  
**է նա շինեայ վանք սուրբ ուխտի:**

<sup>54</sup> Չնայած այս հատկանիշներն առանձին-առանձին բնորոշ են միջնադարյան գրականության այլևայլ ժանրերի ևս, սակայն դրանք գանձարանային կաֆաները (հատկապես Գրիգոր Խլաթեցու) տարբերակում են դասական կաֆաներից:

OVSANNA KHACHATRYAN

**THE KAFAS OF GRIGOR KHLAT'ETS'I AS THE FIRST SAMPLES  
IN THE COLLECTIONS OF SACRED CHANTS**

**Keywords:** *Kafa*, genre, scribe, author, Grigor Khat'ets'i, gandz (litany), Gandzaran (Sacred chants), hymn.

The *kafa* is a unique poetic genre of medieval Armenian literature. It was formed and developed in the 10<sup>th</sup>-16<sup>th</sup> centuries (some *kafas* were written in the 18<sup>th</sup> century). The term *kafa* comes from the Arabic word *qāfiyya* which means "rhyme". Poems called *kafa* appeared in the *Gandzaran* (Hymnal) collections by Grigor Khat'ets'i in the late 14<sup>th</sup> century. The oldest samples of Grigor Khat'ets'i's *kafas* are found in manuscript M 4011. With their general features (structure, metrics, rhyme etc.), these *kafas* correspond to the classic ones but also have their own specific features: they are acrostics forming the author's name, in content they are close to the colophons, etc.

This tradition started by Grigor Khat'ets'i was continued by later authors and lasted until the 18<sup>th</sup> century): Aṙak'el Baghishets'i (a student of Grigor Khat'ets'i Tserents'), poet Simeon, Karapet Baghishets'i as well as other scribes and authors wrote *kafas* dedicated to their *gandzs* in the *Gandzaran*.

ОВСАННА ХАЧАТРЯН

**КАФЫ ГРИГОРА ХЛАТЕЦИ КАК ПЕРВЫЕ ОБРАЗЦЫ ЖАНРА  
В ПЕВЧЕСКИХ СБОРНИКАХ-ГАНДЗАРАНАХ**

**Ключевые слова:** *Кафа*, жанр, писец, автор, Григор Хлатеци, гандз (песнь), Ганадзаран (Сборник священных песен), песня.

Кафа – уникальный поэтический жанр средневековой армянской литературы, сложившийся и развивавшийся в X–XVI веках (в некоторых случаях до XVIII века). Название кафа происходит от арабского слова “кафия”, что означает рифма. Стихотворения под названием “кафа” появились в сборниках “Ганадзаран” Григора Хлатеци в конце XIV века. Древнейшие образцы каф Григора Хлатеци можно найти в рукописи Матендарана 4011 (копия протографа 1399–1400 гг.). Эти кафы в общих чертах похожи на классические спецификой употребления, структурой, метрикой, рифмовкой, но имеют и определенные особенности: это акростихи с именем автора, по содержанию они близки к колофонам и т.д.

Традиция, идущая от Григора Хлатеци продлилась до XVIII в.: Аракел Багишеци – ученик Григора Хлатеци Церенца, стихотворец Симеон, Карапет Багишеци, другие писцы и авторы писали кафы, посвященные их же гандзам в Гандзаране.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

### Գագիկ Դանիելյան

Պաշտոնական նամակագրությունը և դիվանագիտական ընձաները  
հայ-մոնղոլական հարաբերություններում..... 5

### Ստյոպա Պետոյան

Վահան և Սմբատ Դադյանցիների գրահրատարակչական  
գործունեությունը Շուշիում 1880-ական թթ. .... 33

### Անի Ոսկանյան

Ադանայի նահանգի հայերի տնտեսության վերականգնման  
փորձերը 1910-1914 թթ. .... 55

## ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

### Գլորգ Տէր-Վարդանեան

Յովհաննէս Վ. Զօհրապեանի ձեռագրական և բնագրագիտական վաստակը.  
Ինֆնակենսագրականը..... 67

### Օվսաննա Խաչատրյան

Գրիգոր Խլաթեցու կաֆաները որպես գանձարանային կաֆաների առաջին նմուշներ..... 91

### Հայկ Համբարձումյան

Սննդային մոտիվները «Սասնա ծռեր» էպոսում և հայ  
միջնադարյան գրականության մեջ. հերոսների նաշացանկը ..... 105

### Գառնիկ Ա. Հարությունյան

«Կտակ շարչարանաց»-ի կամ Ավագ ուրբաթի ֆարոգի՝ Սիմեոն  
Ա. Երևանցի կաթողիկոսի խմբագրությունը ..... 133

### Հասմիկ Բադալյան

Կիրիկյան Հայաստանի Զորովանքը և գրչական ժառանգությունը ..... 150

### Դավիթ Սրկ. Սահակյան

Կրկին «Հանախասպատոմ հառերի» հեղինակի ու թվագրման հարցի շուրջ,  
Աբրահամ Տերյանի մի հրատարակության առթիվ ..... 165

## ԱՐՎԵՍ

### Իվեթ Թաշարյան, Սարա Լափորթ-Էֆթելիարյան

Մատենադարանի նորահայտ նկարագարդ մի էջ, որպես մշակութային  
ազդեցությունների խորհրդանիշ ..... 186

**Միրանոյ Բեգլարյան**

Թորոս Տարոնացու մանրանկարների պատկերագրության մարիամաբանական հեներ ..... 196

**ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ****Ստելլա Վարդանյան**

Քսուֆի և օժանելիֆի պատրաստման հին հայկական դեղագիրը  
Քսենոֆոնի «Անաբասիս» երկում ..... 215

**Կարինե Մոսիկյան**

Մարմնագննական (ֆիզիոգնոմիկական) երկերը Մատենադարանի ձեռագրերում ..... 225

**ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ 7-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ  
(2021 թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-27) ՆՅՈՒԹԵՐ**

**Զոհրաբ Գևորգյան**

Թուղթը, առօրեականությունը և հասարակական փոխակերպումները  
Կիլիկյան Հայաստանում ..... 248

**Գևորգ Ղազարյան**

Դոնվիակ պատարագի ավանդույթը Հայ Առաքելական եկեղեցու ծիսակարգում ..... 259

**Անդրանիկ Եսայան**

Զակամ Գավառը ժէ դ.-ժԸ դ. Առաջին Քառորդին ..... 285

**Տիգրան Գրիգորյան**

«Աղամի արարումը» թե՛ «Հին ատուրցն Աստուած».  
Դանիել մարգարեի վախճանաբանական տեսիլքը Նորավանքում  
(վերլուծություն ըստ կանոնական և պարականոն բնագրերի) ..... 299

**Շողակաթ Դևրիկյան**

Գրիգոր Լուսավորչին ներկայացնող մեկէջյա փորագրանկարները 18-րդ դարում  
Կոստանդնուպոլսում տպագրված երեք «Յայսմատուր»-ներում ..... 331

**Գրեհա Գասպարյան**

Նոր Զուղայում նկարագարողված ՄՄ 6772 Ավետարանի մեկ  
էջը արևմտաբրիտանական արվեստի համատեքստում ..... 342

**Արմինե Պետրոսյան**

Թոչնամարտի թեման Հայաստանի Ժ-ԺԴ դարերի եկեղեցական ֆանդակում.  
պատկերագրությունը և խորհրդաբանական եզրերը ..... 353

**Վահե Ավետիսյան**

Հույն (Բյուզանդական) ուղղափառ եկեղեցու հետևորդ համայնքը  
Կիլիկիայում ԺԳ-ԺԴ դդ. կեսերին ..... 366

**Հովհաննես Ա. Իգիթյան**

Սարգիս Փիլիսոփա Բ-ի կորսված 532-ամյա պարբերաշրջանները.

Վերականգնում մաս երկրորդ. Հայոց շարժական տոմար-պարբերաշրջանը..... 379

**Գոռ Գալստյան**

Հովհաննես Սարկավագի «Մեկնութիւն տումարիս հայկազնեայ» երկը ..... 425

**ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ****Անի Առաքելյան**

Հակոբ երեց Ամասիացի (Էմասիացի). հայկական ուշ միջնադարի

նորահայտ բանաստեղծը ..... 445

**Տաթևիկ Մանուկյան**

Տեր Խաչատուր Քուրտանցին և նրա փերականությունը ..... 476

**Վանո Եղիազարյան, Անի Ժ. Ավետիսյան**

Մի անտիպ երկլեզվյան տաղ Հովհաննես Թյկուրանցուց ..... 504

**ՀԱՂՈՐԴՈՒՄ****Լուսինե Սարգսյան**

Հայ ձեռագրավեստի ուսումնասիրությունը թվային դարում..... 509

*Բանբեր Մատենադարանի* հանդեսի հոդվածների ձևավորմանը

վերաբերող պահանջներ ..... 525

---

**CONTENTS**
**HISTORY****Gagik Danielyan**

Official Correspondence and Diplomatic Gifts in the  
Armenian-Mongol Relations (Parts 1 and 2).....5

**Styopa Petoyan**

Publishing Activities of Vahan and Smbat Dadyants‘  
in Shushi in the 1880s.....33

**Ani Voskanyan**

The Armenians’ Attempts to Revive the Economy in Adana  
Province Between 1910 and 1914.....55

**PHILOLOGY****Gevorg Ter-Vardanyan**

Yovhannēs Vardapet (Archimandrite) Zohrapean as  
Text Critic and Scribe, His Autobiography.....67

**Ovsanna Khachatryan**

The *Kafas* of Grigor Khat‘ets‘i as the First Samples  
in the Collections of Sacred Chants .....91

**Hayk Hambardzumyan**

Food Motives in the Epic “Daradevils of Sassoun” and in the  
Armenian Medieval Literature: Heroes' Menu.....105

**Garnik A. Harutyunyan**

The Recension of the “Testament of the Passion  
[of Christ]” or the Sermon of Good Friday by Catholicos Simeon I Erewants‘i .....133

**Hasmik Badalyan**

Dzorovank‘ Monastery of Cilician Armenia  
and its Scriptorial Heritage.....150

**Deacon David Sahakyan**

Once Again on the Authorship and Date of “The Oft-Repeated Discourses  
of St. Gregory the Illuminator”: on the Occasion of a Recent Publication  
by Abraham Terian.....165

## ART

**Yvette Tajarian, Sarah Laport-Eftekharyan**

A Newly Discovered Illustrated Page as a  
Symbol of Cultural Influences.....186

**Siranush Beglaryan**

The Mariological Basis of T'oros Taronats'i's Iconography.....196

## NATURAL SCIENCES

**Stella Vardanyan**

The Ancient Armenian Recipe for Preparing Ointment and Incense  
According to Xenophon's *Anabasis*.....215

**Karine Mosikyan**

Physiognomical Works in the Manuscripts  
of Matenedaran.....225

**PROCEEDINGS OF THE 7TH INTERNATIONAL CONFERENCE OF  
YOUNG RESEARCHERS (NOVEMBER 25-27, 2021)**

**Zohrab Gevorgyan**

Paper, Everyday Life and Social Transformations  
in Cilician Armenia.....248

**Gevorg Kazaryan**

The Tradition of the Liturgy Behind Closed Doors in the Armenian  
Apostolic Church Rite.....259

**Andranik Yesayan**

The Province of Zakam in the 17<sup>th</sup> Century and the First  
Quarter of the 18<sup>th</sup> Century.....285

**Tigran Grigoryan**

The Creation of Adam or Ancient of Days?: The Prophetic Vision of Daniel  
in Noravank' (a Discussion on the Basis of Canonical and Apocryphal Texts).....299

**Shoghakat Devrikyan**

Full-Page Engravings with Images of Gregory the Illuminator in the  
Three Synaxaria Published in the 18th Century in Constantinople.....331



**Greta Gasparyan**

One Page of the Gospel M 6772 Illustrated in New Julfa in the  
Context of Western Christian Art.....342

**Armine Petrosyan**

Birds Combat Scene in Armenian Church Decoration of X-XIV  
Centuries: Iconography and Symbolic Perceptions.....353

**Vahe Avetisyan**

Greek-Orthodox (Byzantine) Community in Cilicia  
From the XIII - to the Middle of the XIV Century.....366

**Hovhannes A. Igityan**

The Lost 532 Years Calendar-Cycles of Sargis Philosopher the Second.  
Reconstruction (Part II. The Armenian Non-Fixed  
Calendar and the 532-Year Cycle).....379

**Gor Galstyan**

The *Commentary of the Armenian Calendar*  
by Yovhannēs Sarkavag.....425

**PUBLICATIONS****Ani Arakelyan**

Priest Yakob Amasiats‘i (Emasiats‘i):  
An Unknown Late Medieval Armenian Poet.....445

**Tatevik Manukyan**

Ter Khach‘atur K‘urtk‘ants‘i and His Grammar.....476

**Vano Yeghiazaryan, Ani J. Avetisyan**

An Unpublished Poem by Yovhannēs T‘lkurants‘i.....504

**REPORT****Lusine Sargsyan**

Study of Armenian Manuscript Art in Digital Era.....509  
Requirements for the articles in the journal of The *Bulletin of Matenadaran*.....525

## СОДЕРЖАНИЕ

### ИСТОРИЯ

#### Гагик Даниелян

Официальная переписка и дипломатические дары в Армяно-Монгольских отношениях (части 1 и 2).....5

#### Стёпа Петоян

Издательская деятельность Ваана и Смбата Дадянцев в Шуши в 1880-х гг.....33

#### Ани Восканян

Попытки армян восстановить экономику в провинции Адана в 1910–1914 гг.....55

### ФИЛОЛОГИЯ

#### Геворг Тер-Варданян

Рукописное и текстологическое наследие вардапета Ованеса Зограбяна и его автобиография.....67

#### Овсанна Хачатрян

Кафы Григора Хлатеци как первые образцы жанра в певческих сборниках-гандзаранах.....91

#### Айк Амбарцумян

Пищевые мотивы в эпосе «Сасна црер» (Давид Сасунский) и в армянской средневековой литературе: меню героев.....105

#### Гарник А. Арутюнян

Редакция “Завещания страстей...”, или проповеди Страстной пятницы католикоса Симеона I Ереванци.....133

#### Асмик Бадалян

Рукописное наследие монастыря Дзорованк Киликийской Армении.....150

#### Диакон Давид Саакян

Вновь об авторстве и времени создания “Многовещательных речей св. Григория Просветителя” (по поводу публикации Абраама Терьяна).....165

## ИСКУССТВО

### **Ивет Таджарян, Сара Лапорт-Эфтехарян**

Новооткрытая иллюстрированная страница как символ культурных влияний..... 186

### **Сирануш Бегларян**

Мариологическая основа иконографии Гороса Таронаци..... 196

## ЕСТЕСТВЕННЫЕ НАУКИ

### **Стелла Варданян**

Древний армянский рецепт приготовления мази и благовония из «Анабасиса» Ксенофонта ..... 215

### **Карине Мосикян**

Сочинения о физиогномике в рукописях Матенадарана ..... 225

## ИЗ МАТЕРИАЛОВ 7-ОЙ МЕЖДУНАРОДНОЙ КОНФЕРЕНЦИИ МОЛОДЫХ УЧЕНЫХ (25-27 НОЯБРЯ, 2021 Г.)

### **Зограб Геворгян**

Бумага, повседневная жизнь и социальные преобразования в Киликийской Армении..... 248

### **Геворг Казарян**

Традиция Литургии при Закрытых Дверях в обиходе Армянской Апостольской церкви..... 259

### **Андраник Есяян**

Провинция Закам в 17 – первой четверти 18 в..... 285

### **Тигран Григорян**

“Сотворение Адама” или “Ветхий Днями”: пророческое видение Даниила в Нораванке (анализ по Каноническим и Апокрифическим текстам) ..... 299

### **Шогакат Деврикян**

Полнолистовые гравюры с изображением Григория Просветителя в трех сборниках «Синаксария», изданных в XVIII веке в Константинополе..... 331

### **Грета Гаспарян**

Страница Евангелия М 6772 в контексте Западно-христианского искусства..... 342

**Армине Петросян**

Сюжет с «Борющимися» птицами в церковной пластике  
 Армении X-XIV вв.: иконография и символизм.....353

**Ваэ Аветисян**

Греко-Православная (Византийская) община  
 в Киликии XIII - середины XIV вв.....366

**Ованнес А. Игитян**

Утраченный 532-летний календарный цикл Саргиса Философа второго.  
 Реконструкция (часть II. Армянский подвижный календарь и 532-летний цикл).....379

**Гор Галстян**

Толкование армянского  
 календаря Ованнеса Саркавага.....425

**ПУБЛИКАЦИИ****Ани Аракелян**

Иерей Акоб Амасийский (Эмасийский),  
 неизвестный армянский поэт Позднего Средневековья.....445

**Татевик Манукян**

Тер Хачатур Куртканци и его грамматика.....476

**Вано Егиазарян, Ани Ж. Аветисян**

Неизданное двуязычное стихотворение  
 Ованнеса Тлкуранци.....504

**СООБЩЕНИЕ****Лусине Саргсян**

Изучение армянского рукописного искусства в цифровую эпоху.....509

Требования к оформлению статей в журнале *Вестник Матенадарана*.....525

**ԲԱՆԹԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

**Հատոր 33**

**BULLETIN OF MATENADARAN**

**Volume 33**

**ВЕСТНИК МАТЕНАДАРАНА**

**Том 33**

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ Անահիտ Խանգաղյանի  
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տոլմանեանի  
Շապիկին՝ Թորոս Տարոնացի, Տիրամայրը մանկան հետ, Մատթեոսի  
Ավետարանի անվանաթերթ, ՄՄ 6289, էջ 12ա  
Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան  
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ տպարանում

Ք. Երևան, Ներսիսյան 1

Չափսը՝ 70×100 1/16, տպագրական մամուլ՝ 33,5

տպաքանակ՝ 150

Մատենադարան

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի

հրատարակչական բաժին, ֆ. Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (010) 513033

[publishing.matenadaran@gmail.com](mailto:publishing.matenadaran@gmail.com)

Ամսագրի թվային տարբերակը՝

[banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/](http://banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/)